Արձանագրություն N 2

ՀՀՔՊԿ-ԳՀԱՊՁԲ-18/15 ծածկագրով բենզինի (ռեգուլյար) ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան	25.07.2018թ. ժամը 11:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Հ. Բաղինյան
Հանձնաժողովի անդամներ ՝	Տ. Ղուկասյան /գնահատող/
	Ս. Զաքոյան /բացող/
	Գ. Խաչատրյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝	Ն. Հարությունյան

Բացակայում էր՝

հանձնաժողովի անդամ	Շ. Իսախանյան /գնահատող/

1. Տեղեկություններ ՀՀՔՊԿ-ԳՀԱՊՁԲ-18/15 ծածկագրով գնման ընթացակարգին ներկայացված հայտերի բացման մասին

(Հ.Բաղինյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

ա) Գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով 2018 թվականի հուլիսի 23-ին ժամը 11:30-ին:

բ) Գնման ընթացակարգի նախահաշվային արժեքը կազմում է 3 767 273.20 (երեք միլիոն յոթ հարյուր վաթսունյոթ հազար երկու հարյուր յոթանասուներեք դրամ քսան լումա):

գ) Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Էլ. փոստի հասցե	ՀՎՀՀ
1	<<Մաքս Օիլ>> ՍՊԸ	maxoil.llc@mail.ru	02662703
2	<<ՖԼԵՇ>> ՍՊԸ	flashltdtender@gmail.com	01808789

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ – 0:

դ) Մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

Մասնակցի անվանումը	Ապրանքի անվանումը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ**	Ընդհանուր գինը
1	3	4	5	6
<<Մաքս Օիլ>> ՍՊԸ	Բենզին (ռեգուլյար)	2 885 223.33	577 044.67	3 462 268
<<ՖԼԵՇ>> ՍՊԸ		3 175 333.33	635 066.67	3 810 400

ե) Հայտերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ <<Մաքս Օիլ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հավելված N 1-ում պատվիրատուի անվանումը ճիշտ չի գրված:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի պահանջը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց.

- կասեցնել նիստը,
- ծանուցել վերը նշված կազմակերպությանը մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունը:

Վերջինիս կողմից շտկվել և 24.07.2018թ. ներկայացվել է արձանագրված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ – 0:

2. Տեղեկություններ ՀՀՔՊԿ-ԳՀԱՊՁԲ-18/15 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին

(Հ.Բաղինյան)

2.1 Հիմք ընդունելով ընթացակարգի մասնակիցների կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը գնահատող հանձնաժողովի կողմից հայտերը գնահատվել են հետևյալ հերթականությամբ և հետևյալ կերպ.

Չափաբաժին 1 բենզին (ռեգուլյար)		
Մրցույթում զբաղեցրած տեղը	**Մասնակցի անվանումը**	**Հայտի գնահատականը**
1	<<Մաքս Օիլ>> ՍՊԸ	բավարար
2	<<ՖԼԵՇ>> ՍՊԸ	բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

3. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Հ.Բաղինյան)

3.1 Հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը՝ հանձնաժողովը որոշեց.

- ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) հարցում ներկայացնել գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած <<Մաքս Օիլ>> ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:
- Ծանուցել <<Մաքս Օիլ>> ՍՊԸ-ին՝ ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հրավերով պահանջվող փաստաթղթերի: Սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

4. ՀՀՔՊԿ-ԳՀԱՊՁԲ-18/15 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Հ.Բաղինյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից պատասխանները ստանալու օրը ժամը 11:30-ին, բայց ոչ ուշ, քան 2018 թվականի հուլիսի 31-ը ժամը 11:30-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գնումների կազմակերպման բաժնում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Հ. Բաղինյան

Անդամ՝ ---------- Տ. Ղուկասյան

---------- Ս. Զաքոյան

---------- Գ. Խաչատրյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն. Հարությունյան